ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԵՎ ԴՈԿՏՈՐԱՆՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 8-9/Կ

ք. Երևան «23» հունվարի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության ԿԳՆ գիտության կոմիտեն, այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և *"Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն" ՊՈԱԿ*-ը, այսուհետ՝Կատարող, ի դեմս տնօրեն *Տիգրան Մարկոսյանի,* որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել «Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ» ծրագրի շրջանակներում ասպիրանտների և դոկտորանտների համար հաշվարկված կրթաթոշակի հատկացման պարտավորությունները:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրի գինը կազմում 137500 (հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3. Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել: Այդ դեպքում կողմերի միջև ստորագրվում է գրավոր համաձայնագիր:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1. կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանգիրը ուժի մեջ է ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտե ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 Հ/Հ 900011033165 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Գլխավոր քարտուղար՝ Լ. Մարդոյան ---------- (ստորագրություն) Կ.Տ	ՀՀ <<Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն>> ՊՈԱԿ Երևան, Նուբարաշեն, Մասիսի խճուղի 107/2 ՀՎՀՀ՝ 03506324 Հ/Հ 900018006008 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Տնօրեն՝ Տ.Մարկոսյան ---------- (ստորագրություն) Կ.Տ